**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

| | |
|---|---|
| **ԹԵՄԱ** | Ընթերցանության զարգացումը ժամանակակից ՏՀՏ մեթոդներով |
| **ԱՌԱՐԿԱ** | Հայոց լեզու և գրականություն |
| **ՀԵՂԻՆԱԿ** | Անահիտ Հովհաննիսյան |
| **ՄԱՐԶ** | Արմավիր |
| **ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ** | «Հայկաշենի Գագիկ Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ |

# Բովանդակություն

**Բովանդակություն** ..... 2
Ընթերցանության զարգացումը ժամանակակից ՏՀՏ մեթոդներով ..... 3
Ներածություն ..... 3
Գրականության ակնարկ ..... 4
Ընթերցանությունը ՏՏ դարում ..... 4
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ ..... 8
Հետազոտության ընթացքը ..... 8
*Փորձարարական դաս 1* ..... 15
*Փորձարարական դաս 2* ..... 16
*Փորձարարական դաս 3* ..... 16

## Ընթերցանության զարգացումը ժամանակակից ՏՀՏ մեթոդներով

«Գիրքը պետք է կարդալ մատիտը կամ գրիչը ձեռքին:

Ոչ մի բան այնպես չի ձևավորում ճաշակն ու

դատողությունների ճշտությունը, ինչպես

դուր եկած հատվածն արտագրելու կամ

խորիմաստ միտքը նշելու սովորությունը»

**Անդրե Մորուա**

## Ներածություն

Արտահայտիչ ընթերցանությունը կրթելու և դաստիարակելու կարևոր միջոց է .նրանում սերտորեն միահյուսվում են տեքստի խոր վերլուծությունը և գեղարվեստական մանրամասնի նկատմամբ սովորողների ուշադրության սրումը և գեղագիտական ճաշակը:

Անհնարար է դպրոցականների մեջ սեր առաջացնել գրականության և մեր հրաշալի լեզվի նկատմամբ առանց խոսքի արվեստի՝ ընդհանրապես և արտահայտիչ ընթերցանության՝ մասնավորապես:

**Այս հետազոտության նպատակն է** ուսուցանել կարդալու և կարդացածը հասկանալու կարողության մշակում: Արտահայտիչ ընթերցանության կազմակերպումը , տեխնիկան և համագործակցային հմտությունների զարգացում է: Սովորեցնել սովորողներին արտասանական հնչերանգի սխալներն ու թերությունները՝ բացատրելով ու մատնանշելով, թե ինչպես ուղղել այդ կարգի սխալները , վերացնել թերությունները: Ճիշտ ընթերցանության համար իմանալ արտահայտչության հիմնական միջոցները՝ դադարը, ուժգնության շեշտը, մեղեդին, հնչերանգը, տեմպը, ռիթմը, որոնք իրար հետ սերտորեն կապված են:

**Խնդիրները՝**

- Կարողանան տիրապետել ընթերցանության տեխնիկային, վարժ ու սահուն կարդալուն: Նոր գործիքների կիրառմամբ զարգացնել ընթերցանության կարողությունները:

- Կարողանալ ձևավորել հետաքրքրասիրություն դեպի ընթերցանությունը հատկապես կրտսեր դպրոցում, սովորողը հաճախ չի ուզում կարդալ, չի կարողանում վարժ կարդալ, վախենում է ընկերների ծաղրից:

- Ընթերցանության գործի կազմակերպումը գործնական բնույթ ունի , կարողանան ընթերցանության միջոցով որոշակի կարողություններ և հմտություններ մշակելու սովորածը կյանքի կապելու կարևորագույն խնդիրները:

## Գրականության ակնարկ

Գրականության ակնարկն ամփոփում և սինթեզում է որոշակի թեմայի վերաբերյալ առկա գիտական հետազոտությունները: Գրականության ակնարկները գիտական, հասարակական գիտությունների և հումանիտար գիտությունների գրականության սովորական ձև են: Այնուամենայնիվ, ի տարբերություն հետազոտական փաստաթղթերի, որոնք հաստատում են նոր փաստարկներ և իրականացնում են բնօրինակ ներդրումներ, գրականության ակնարկները կազմակերպում և ներկայացնում են առկա հետազոտությունները: Որպես ուսանող կամ գիտաշխատող, դուք կարող եք գրականության ակնարկ ներկայացնել որպես ինքնուրույն թերթ կամ որպես ավելի մեծ հետազոտական ծրագրի մաս:

## Ընթերցանությունը ՏՏ դարում

Արդյո՞ք պետք է մանրամասն խոսել ժամանակի ընթացքում գրաստեղծման և համապատասխանաբար ընթերցանության ձևերի փոխվելու մասին: Համենայն դեպս, ես տրամաբանության փոխարեն զգացական ընկալման գլուխ բարձրացնելու պահին միշտ մտքով էքսկուրս եմ անում ժայռապատկերներից

սալիկներ, դամբարանագրերից պապիրուսներ, մագաղաթ, բամբուկ, թուղթ էվոլյուցիայի հետքերով: Վստահաբար՝ քարից փափուկ պապիրուսին անցնելիս շատ ու շատ մարդիկ ասել են, թե ճշմարիտ գիրը պիտի կարծր քարի վրա լինի, որ ձեռքերում քարի սարսուռը զգաս և առնես թեթև մգլահոտը: Չե՞ք կարծում, որ մագաղաթից հրաժարվելը՝ հօգուտ թղթի նույնպես հուզական առումով կարող էր սթրեսային լինել: Պատահական չէ, որ կավե սալիկներ օգտագործվել են աշխարհի տարբեր երկրներում՝ ընդհուպ մինչև 19-րդ դարը: Հետաքրքրական է, բայց տպագիր գրքերի զգարանային ընկալման մասին միայն դասական գրքասերները չէ, որ խոսում են, այլև տարբեր գիտնականներ և հոգեբաններ:

Բոլորովին վերջերս կարդացի թեմային հանգամանորեն անդրադարձող մի հոդված, ուր հետևյալ մեջբերումն էր արված. «Ընթերցանությունը մարդու և տեխնոլոգիաների փոխհարաբերություն է, – ասում է նորվեգիական Ստավանգերի համալսարանի բանասիրական գիտությունների պրոֆեսոր Էն Մանգենը: – Հնարավոր է՝ թղթի շոշափելիությունն ու ֆիզիկական հաստատունությունը հանգեցնում է որոշակի իմացական և զգայական փորձառության»: Նույն հոդվածի պնդմամբ՝ որոշ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ ընթերցանությունը թղթից ավելի խորքային է, քան ընթերցանությունը էկրանից, իսկ այլ ուսումնասիրություններ էլ, թերևս որևէ տարբերություն չեն գտնում: Ընդ որում, հոդվածում շատ երկար խոսվում է համակարգչային էկրանից ուղղահայաց ընթերցման անհարմարությունների մասին՝ վերջում հավելելով, որ դա արդեն ժամանակավրեպ հարցադրում է, քանի որ բազմաթիվ ծրագրեր և գաջեթներ գալիս են լուծելու սքրոլ (նավարկումային) թերթման թերությունները:

Մեկ այլ նմանատիպ հրապարակման մեջ էլեկտրոնային ընթերցանության դեմ գլխավոր հակափաստարկն այն է, որ ընթերցանությունը ֆիզիկական գրքից ենթադրում է քարտեզագծման պես ինչ-որ գործընթաց, որի օգնությամբ հնարավոր է դառնում ավելի հստակ վերհիշել կարդացածը, քանի որ տեսողական հիշողությամբ տպավորվում է տվյալ էջի որոշակի մասում որոշակի բովանդակության տեղակայումը (օրինակ՝ ա՞ջ, թե՞ ձախ հատվածում), ինչպես

նաև մտապատկերային զուգորդմանն են նպաստում թղթի առանձնահատկությունները, իլյուստրացիաները և այլն: Մինչդեռ էլեկտրոնային գրքերի պարագայում ֆիզիկական զուգորդումներով մտապատկերային քարտեզագրումը հնարավոր չէ, ինչն էլ թուլացնում է թե՛ կենտրոնացման և թե՛ մտապահման բնատուր հնարավորությունները: Հետաքրքիր է, որ 2013-ի ապրիլի 11-ին հրապարակած այս նյութն ասածները հավաստելու համար ներկայացնում է այնպիսի գիտափորձեր, որոնք արվել են համակարգչի էկրանից ընթերցանությամբ (և ոչ էլեկտրոնային ընթերցիչով): Իսկ գիրքը, որին հղում է տալիս հոդվածագիրը, այն է՝ «Անթուղթ գրասենյակի մասին միֆը» (հեղինակներ՝ Էբիգեյլ Սելլեն, Ռիչարդ Հարփեր), հրատարակվել է 2001-ին և իհարկե թեական ու վիճելի քննարկումների հիմքում դրել է կրկին համակարգչային ընթերցանության խնդրահարույց կողմերը: Սա ընդգծում եմ ոչ այնքան առաջ քաշված տեսակետները մերժելու, որքան ցույց տալու համար հասարակության հստակ նախատրամադրվածությունը, որի արդյունքում թեմատիկ հոդվածների մեծ մասը չգիտակցված կամ գիտակցված միտումնավորությամբ անտեսում է էլեկտրոնային ընթերցանության արդի ձեռքբերումները և փաստերը լղոզում իրար՝ հօգուտ սեփական նախապաշարմունքի:Ընթերցասիրության դրսևորման բոլորովին, բոլորովին ֆենոմենալ մի ձև ևս, որն ամբողջությամբ արտապատկերում է դարի մտածողությունը և փաստորեն ինքնորոշման ամենատարածված կերպը. խոսքը սոցիալական ցանցերի մասին է: Մեր օրերում մեր վարվեցակարգը շատ կողմերով պայմանավորված է ոչ միայն իրական հանրային հարաբերություններով, այլև նույն մոդելի վիրտուալ արտապատկերման տարածությամբ՝ համացանցով և մասնավորապես սոցիալական ցանցերով, որը, իրականում արտապատկերման գործառույթից բացի նաև կազմակերպչական, քարոզչական գործառույթ է իրականացնում: Եթե հաստատում ենք, որ զուգահեռ իրականությունում զետեղված վիրտուալ հասարակությունը կյանքը պասիվ պրոեկտողի դերում չէ, այլև ակտիվ վերաձևողի, ուրեմն սոցիալական ցանցերը, որպես արժեհամակարգային կրիչներ, մեծ հետաքրքրություն են ներկայացնում իրենցից: Այժմ պատկերացրեք, թե մեր հարցադրման կոնտեքստում որքան առավել ևս կարևոր են գրականության ու ընթերցանության «մասին» կամ «համար» սոցիալական ցանցերը: Այդպիսիք, պարզվում է, բավականին շատ են: Թվարկեմ դրանցից ինձ հայտնիները՝ Kobo’s Reading Life, Shelfari, Scribd, Wattpad, HarperCollins’ Bookperks, Copia, Nook Friends, inReads, Book Country և բոլորիս քաջ հայտնի Goodreads-ը: Այս սոցիալական ցանցերում հավաքվում է գրքասերների մի մեծ հասարակություն, ովքեր միմյանց հետ քննարկում են իրենց սիրելի գրքերը, «կիսվում» մեջբերումներով, տալիս գնահատականներ կարդացած գրքերին, խաղում բլից հարցրերով խաղեր՝ գրքերի մասին, կազմում իրենց գրքերի ցանկը (վիրտուալ գրադարակ), տեղեկանում նոր գրքերի, հեղինակների մասին և այլն և

այլն: Մոտավորապես նախահինտերնետային հասարակությանը հարազատ ընթերցասերների ակումբների պես մի բան, բայց շատ ավելի ակտիվ և ֆունկցիոնալ, քանի որ դրանցում ներգրավվում են միաժամանակ շատ մարդիկ, ինչպես նաև կարող են հաղորդակցվել օրվա ցանկացած պահի, ցանկացած վայրից: Սրանցից ամեն մեկը յուրովի խթանում է գրքասեր կոլեկտիվ մտածողության ձևավորմանը, ստեղծում հատուկ հարթակ, ուր ամեն ինչ գրքերի մասին է՝ հարմարավետ ինտերֆեյսով, հղումներով և անհրաժեշտ ինֆորմացիայի պաշարով: Ուշադրություն դարձրեք՝ ինչ հաղորդագրություն է հղում Scribd-ը իր այցելուներին. «Ֆիլմերի սիրահարներն ունեն Netfix-ը, երաժշտության սիրահարներն ունեն Spotify-ը և գրքասերները (անկախ նրանից արդյո՞ք կարդում են գեղարվեստական գրականություն, թե՞ լավ վաճառվող աղբը– ընդգծումն իմն է՝ Գ.Ա.) այժմ ունեն Scribd-ը»: Kobo’s Reading Life-ում առաջարկում են ստեղծել ընթերցանության օազիս՝ Reading Mode կարգավորումով, որի դեպքում կանջատվեն պլանշետի Facebook, Skype և այլ ծանուցումները՝ ստեղծելով ընթերցանությամբ SS աշխարհից փախչելու, ինչպես նաև ընթերցանության համար պլանշետի մարտկոցի խնայման հրաշալի տարբերակ: Իսկ Book Country-ն և Wattpad-ը ստեղծված են ոչ միայն ընթերցասերների, այլև հեղինակների համար, ովքեր կարող են հրապարակել իրենց գրքերը այդ հարթակներում:

«Մտածված ընթերցանություն» , որը կառուցվել է հիմնական ուսումնական ծրագրի « Գրական ընթերցանություն » առարկայի հիմնական նպատակներին համապատասխան ուղղված բոլոր տեսակի բարելավմանը «Մտածված ընթերցանություն» ծրագրում նկարագրված բովանդակությունը, առաջադրանքները, ձևերը կառուցված են հիմնական ուսումնական ծրագրի «Գրական ընթերցանություն» առարկայի հիմնական առաջադրանքների համաձայն՝ ուղղված բոլոր տեսակների կատարելագործմանը:

Գրական ընթերցանությունը սովորողի ուսուցման համակարգի հիմնական առարկաներից մեկն է: Սովորողի մոտ ձևավորում է ֆունկցիոնալ գրագիտություն նպաստում է երեխայի ընդհանուր զարգացմանն ու դաստիարակությունը: Գրականության ընթերցանության հաջողությունը ապահովում է այլ առարկաների դասավանդման արդյունավետությունը:

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Հետազոտությունն իրականացրել եմ Կոտայքի մարզի Լեռնանիստի միջն. դպրոցում: Դասն անցկացրել եմ 8-րդ և 9-րդ դասարաններում: 8-րդ դասարանում սովորում են 32 աշակերտ, իսկ 9-րդ դասարանում թվով 32 աշակերտ: Փորձարարական դասը կատարվել է յուրովի: Ուսումնասիրել եմ մասնակցության ցուցանիշը և գրագիտության մակարդակը:

**Հետազոտության ընթացքը**

**Օրվա դասի պլան**

**Թեմա- «Թմկաբերդի առումը» պոեմը**

**Դասի նպատակը**

**Սովորողը պետք է՝**

- թվարկի և բացատրի պոեմի ժանրային առանձնահատկությունները
- արտահայտիչ կարդա պոեմը և անգիր արտասանի որոշ հատվածներ
- բնութագրի և համեմատի պոեմի հերոսներին
- բացատրի հիմնական գաղափարը
- դատողություն անի չարի և բարու, մարդկային լավ և վատ արարքների մասին

**Կազմակերպչական մաս(2 րոպե)**

Նախորդ դասի հարցում, տնային աշխատանքի ստուգում:(10 րոպե)

Նոր դասի մատուցում

**Խթանում՝**

Գրատախտակին գծել Т-աձև աղյուսակ և աշակերտներին առաջարկել թվարկել մարդկային լավ և վատ որակներ: Աշակերտները տեղից ասում են , իսկ ուսուցիչն աղյուսակի մի մասում գրում է դրական հատկանիշները , մյուս կողմում բացասականները:

**Իմաստի ընկալում**

Ամփոփելով Т-աձև աղյուսակը՝ ուսուցիչն իր համառոտ խոսքում ասում է, որ «Թմկաբերդի առումը» պոեմում հեղինակը նույնպես ներկայացրել է տարբեր «լավ ու վատ» հատկանիշներ

**Կշռադատում**

Սովորողները ներկայացնում են հերոսների անձնային հատկանիշները, ուսուցիչը գրանցում է դրանք , որից հետո անդրադարձ են կատարում խթանման փուլում կազմած աղյուսակին՝ համապատասխանեցնելով կամ ավելացնելով նոր հատկանիշներ:(20 րոպե)

Նոր դասի ամրապնդում(5րոպե)

Գնահատում(2 րոպե)

Տնային հանձնարարություն(3րոպե)

Անդրադարձ(3րոպե)

## ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ

## ԴԱՍԱՐԱՆԸ՝ 8-րդ

**ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝** Բացականչական նախադասություն

**ԴԱՍԻ ՏԻՊԸ՝** ՆՈՐ ՆՅՈՒԹԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ԴԱՍ

**ԴԱՍԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝** 45 ՐՈՊԵ

**ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

**Ա/ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ՝**

- Իմանալ բացականչական նախադասության արտահայտած ընդհանուր երանգը
- Կազմությունը

**Բ/ՍՈՑԻԱԼԱԿԱՆ՝**

- Ինքնուրույն աշխատելու,
- Տեսական գիտելիքները գործնականում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ կիրառելու կարողությունների զարգացում
- **ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ՝** դասագիրք, պաստառներ,քարտեր

**ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ՝** Թեմային առնչվող պաստառներ

**ՄԵԹՈԴՆԵՐ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐ՝** ԽԻԿ համակարգ, մտագրոհ, խմբավորում, զրույց, Տ-աձև աղյուսակ,խմբային և անհատական աշխատանքներ

**ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝** բացականչություն,հնչերանգ:

**ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՄԱՍ**

**ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ**

**ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Կիրառվում է մտագրոհի մեթոդը: Հարցերը բովանդակում են «Նախադասության տեսակներն ըստ հաղորդակցման երանգի» թեմայի շուրջ: Վերհիշում են պատմողական, հարցական, հրամայական նախադասությունները, բերում են օրինակներ:

Ուսուցիչը գրատախտակին գրում է «Բացականչություն» բառը:Օգտագործում է խմբավորման մեթոդը:Հնչեցված կարծիքները, որոնք գրառում է, վերաբերում են հետևյալ հարցին. «Ի՞նչը կարող է ստիպել մեզ բացականչել»:

Ստանում են հետևյալ գծապատկերը:




## ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՓՈՒԼԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ ուսուցիչը զրույցի միջոցով ներկայացնում է բացականչական նախադասության արտահայտած ընդհանուր երանգը, այն է՝ զգացական երանգ:

Բացականչական նախադասության կազմությունը ներկայացնելու նպատակով դասարանը բաժանում է խմբերի:Տրվում է հանձնարարություն. առանձնացնել նախադասությունները երկու սյունակով: Առաջին սյունակում դուրս գրել այն նախադասությունները, որոնք պարունակում են ձայնարկություններ, մյուս սյունակում՝ միայն բացականչական նշան պարունակող նախադասությունները:Առանձնացնում են հետևյալ սյունակում (T-աձև աղյուսակ):Ի՞նչ եք զգում նախադասությունները կարդալիս:

| Ձայնարկություններ պարունակող | Բացականչական նշան պարունակող |
|---|---|

Ամփոփում են աշխատանքը:

## ԿՇՌԱԴԱՏՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՒԼԻ ՆԿԱՐԱԳՈՒԹՅՈՒՆԸ

Բաժանում է քարտեր անհատական աշխատանքի համար: Հանձնարարվում է դուրս գրել բացականչական նախադասությունները, նշել ինչով են կազմված:

Գնահատվում են:

## ՏՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Դասագրքի համապատասխան առաջադրանքներից:

## ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ

**ԴԱՍԱՐԱՆԸ՝** 9-րդ

**ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝** «Սասնա ծռեր» էպոսի գրական մշակումները

**ԴԱՍԻ ՏԻՊԸ՝** ԱՄՓՈՓՄԱՆ ԴԱՍ

**ԴԱՍԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝** 45 ՐՈՊԵ

**ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

Ա/ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ՝

Իմանալ ՝ « Սասնա ծռեր» էպոսի գրական մշակումների ընդհանուր բնութագիրը

Գտնել բնագրի և մշակումների միջև եղած նմանություններն ու տարբերությունները

Կազմել սահիկահանդես՝ ստեղծելով համակարգված նյութ

Բ/ՍՈՑԻԱԼԱԿԱՆ՝

Լսելու

Ընկալելու

Տրամաբանելու

Համագործակցելու

Ստեղծագործելու

Տեղեկատվություն որոնելու և գտնելու

Ժամանակակից տեխնոլոգիաներով աշխատելու

Տրամաբանական մտածողության

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ՝ դասագիրք, կայքերի հղումներ, լրացուցիչ գրականություն,գրատախտակ, սահիկահանդեսի կազմման ուղեցույց:

ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ՝ տեսանյութ Սասունցի Դավթի արձանի մասին

ՄԵԹՈԴՆԵՐ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐ՝ ԽԻԿ համակարգ, մտագրոհ, միջառարկայական կապի ստեղծում/գրականություն-ինֆորմատիկա/, Վենի դիագրամ, գաղափարների քարտեզ, խմբային աշխատանք

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ Սասունցի Դավիթ, մշակում,, բնագիր, կերպարներ:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՄԱՍ

## ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

### ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մտագրոհի միջոցով ուսուցիչը հարցեր է ուղղում թեմայի շուրջ: Վերհիշում են էպոսի առանձնահատկությունները, ճյուղերը, հերոսներին:Ապա դիտում են տեսանյութ, որը ներկայացնում է Սասունցի Դավթի արձանի մասին:

### ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՓՈՒԼԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի, տալիս թեմայի համար օգտակար գրականություն, կայքերի հղումներ և հանձնարարում կիրառել Microsoft office /PowerPoint, Sway/ ծրագրերը: Կազմել սահիկահանդեսներ, որոնք կամփոփեն « « Սասնա ծռեր» էպոսի գրական մշակումներ» թեման:

Բաժանում է սահիկահանդեսի կազմման ուղեցույցներ: Ուղեցույցում նշված է այն կառուցվածքը, որը պիտի ունենա սահիկահանդեսը:

Սահիկահանդեսի կազմման ուղեցույց

1. Էպոսի ընդհանուր բնութագիրը
2. Գրական մշակումների ընդհանուր բնութագիրը
3. Ներկայացնել որևէ գրական

Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր աշխատանքը, ամփոփում են:

ԿՇՌԱԴԱՏՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՒԼԻ ՆԿԱՐԱԳՈՒԹՅՈՒՆԸ

Կազմել Վենի դիագրամ՝ համեմատելով իրենց ներկայացրած մշակումը և բնագիրը:




Ամփոփում են և գնահատվում:

ՏՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ամբողջացնել և տեղեկություններով հագեցնել սահիկահանդեսները:

*Փորձարարական դաս 1*

## Օրվա դասի պլան

## Հայոց լեզու և գրականություն

Առաջին դասը դրել եմ **8-րդ դասարանում**:

**Թեման՝** Թումանյանի <<Թմկաբերդի առումը>> պոեմը: <<Թմկաբերդի առումը>> ուսումնասիրելիս աշակերտները դասը ներկայացնելուց հետո, պոեմը ուսումնասիրելիս դժվարանում էին ճիշտ վերլուծել, ընկալել գործի անմահության գաղափարը: Միայն ավանդական և ժամանակակից մեթոդներով աշխատել դեռևս

չի կարող լավ արդյունք ապահովել: Համագործակցությամբ հերոսների անձային հատկանիշները վեր հանելով այլ դասին ես հասա իմ առջև դրված նպատակին:

Դատողություն անել չարի և բարու, մարդկային լավ ու վատ արարքների մասին: Ի վերջո տալ գործի անմահության գաղափարը:

## *Փորձարարական դաս 2*

Ուսումնասիրությունը կատարվել է **8-րդ դասարանում**:

**Թեման՝** <<Բացականչական նախադասություն>>: Հետազոտության ուսումնասիրության նպատակաուղղվածությունը եղել է այն, թե ինչ արդյունք կապահովի այս աշխատանքը:

Դասի անցկացման համար սկսել եմ <<Մտագրոհ.>> մեթոդով: Դասարանը բաջանել եմ 4 խմբի ըստ նախադասության հաղորդակցման երանգի: Սովորողները համագործակցային մեթոդով կարողացան կատարել իրենց առջև դրված խնդիրները:

Դասի դրական կողմն է՝ սովորողները աշխատում էին խմբերով, օգնում միմյանց խմբավորման մեթոդ կիրառելով:

Դասի բացասական կողմն է՝ պասիվ աշակերտների ներգրավվածությունը դասին:

Հետազոտական աշխատանքի շեշտը հիմնականում դրվել է դասարանում սովորողների գիտելիքների և կարողությունների զարգացմանը:

## *Փորձարարական դաս 3*

Հետազոտական աշխատանքը կատարել եմ **9-րդ դասարանում:**

**Թեման՝** <<Սասնա ծռեր>> էպոսի գրական մշակումները:

Հետազոտության ուսումնասիրության նպատակաուղղվածությունը եղել է այն, թե նոր տեխնոլոգիաների ՏՀՏ կիրառումը ինչ արդյունքվ կապահովի: Օր օրի կրթությունը փոփոխությունների է ենթարկվում:

Սովորողների առաջադիմությունը միմյանց հետ համեմատելը անհատապես խրախուսում է, որ սովորողները կենտրոնանան իրենց ուսումնական աճի վրա:

Ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ դասի անցկացում:

Այս նոր ՏՀՏ կիրառմամբ դասապրոցեսի արդյունավետ կազմակերպումը համագործակցային հմտությունների զարգացմանը զարկ տվեց:

Այս հետազոտական աշխատանքի ժամանակ ունեցա նոր կրթական մեծ ձեռքբրումներ: ՏՀՏ գործիքների կիրառմամբ, մատչելի լեզվով ու հոգու ջերմությամբ ցանկացել եմ հասանելի դարձնել սովորողին:

## Եզրակացություն

Իմ հետազոտական-ստեղծագործական աշխատանքում լավն ու առաջադեմը տեսնելու, գնահատելու, լավ արդյունք ապահովելու համար եկա այն եզրակացության, որ լավ արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է կիրառել ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ: Փորձը ցույց տվեց, որ նոր մեթոդներով և տեխնոլոգիաներով դաս անելիս սովորողների մոտ նկատվում է մեծ ոգևորություն:
Ճիշտ, արդյունավետ պլանավորմամբ հասա իմ մշակած պլանի վերջնարդյունքին:



**Օգտագործված գրականության ցանկ**


1. 8-րդ դասարանի գրականության դասագիրք
2. 9-րդ դասարանի գրականության դասագիրք
3. Գեղարվեստական գրականության վերլուծության մի քանի սկզբունքները
4. Հայ գրականության մեթոդիկա